ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1916—1917 թ. մարտ)

Հ. Ս. ՄԵԼԻՔՅԱՆ

Ցարական Ռուսաստանը 1916 թ. ավելի ու ավելի էր մխրճվում իմպերիալիստական պատերազմի արյունոտ սպանդի մեջ։ Պատմական մոմենտի հասարակական-քաղաքական կյանքը, Վ. Ի. Լենինի բնորոշմամբ, «արյունոտ մի գունդ»[1] էր։ Պատերազմի վերջը չէր երևում։ «Պայքար» թերթը 1916 թ. գրում էր, որ «մեկ կամ երկու տարի առաջ ժողովրդին պատերազմի վախճանը ավելի մոտ էր թվում, քան այդ այսօր տեղի ունի»[2]։ Ողջ երկրում հասունանում էր ճգնաժամը, որը իր մեջ էր առնում կյանքի բոլոր հիմնական բնագավառները՝ տնտեսական, քաղաքական և ռազմական։

Կովկասյան ողջ բանակում, այդ թվում և Հայաստանում գտնվող զորամասերում, հեղափոխական շարժումը նոր թափ էր ստանում։

Բոլշևիկյան շատ կոչերի թվում, 1915 թ. Կովկասում, բազմացվում և զինվորների ու աշխատավորների մեջ տարածվում էր Ցիմմերվալդի հայտնի կոնֆերանսի մանիֆեստը, որը ստորագրել էր նաև Վ. Ի. Լենինը։ Նրանում մերկացվում էին միջազգային իմպերիալիզմի արյունոտ գործերը, նշվում պատերազմի դեմ ժողովուրդների համախմբման անհրաժեշտությունը։

Այդ կոչի մի քանի օրինակներ ոստիկանությունը հայտնաբերել էր Ալեքսանդրապոլում։ Այդ մասին, 1916 թ. ապրիլի 8-ին, կովկասյան զինվորական իշխանություններին հայտնում էր Երևանի նահանգական ժանդարմական վարչության պետը[3]։

Կովկասյան բոլշևիկները դեռ հնարավորություն չունեին հրատարակելու ռուսերեն լեզվով թերթեր։ Բոլշևիկները օգտվում էին լեգալ մամուլի հնարավորություններից։ Այդ տեսակետից ուշագրավ երևույթ էր 1915—1917 թթ. «Պայքար» միացյալ սոցիալ-դեմոկրատական հայկական թերթի գոյությունը։

Պատերազմի տարիներին ցարիզմը բանակ զորակոչեց մոտ 200 հազար հայերի։ Նրանց զգալի մասը նետվեց կովկասյան ռազմաճակատ։ Կասկածից վեր է, որ «Պայքար»-ը իր ընթերցողների լայն շրջանն ուներ թիկունքում և բանակում, ոչ միայն հայ, այլև մյուս ազգերի զինվորների միջավայրում։ «Պայքար»-ը ուղարկվում էր ռազմաճակատ։ Նրանում տպագրվում էին զինվորական նամակներ, բարձրացվում պատերազմի ու հեղափոխության սկզբունքային հարցեր։

---

1 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 461։

2 «Պայքար», № 31, 31-ը հուլիսի 1916 թ.։

3 Տե՛ս ՍՍՀՄ ՀՀ ԿՊԱ, ֆ. 102, ց. 1916, գ. 5792, թ. 1։ Վկայակոչվում է ըստ «Բանբեր Հայաստանի արխիվների», № 3, 1967 թ.։

Բոլշևիկները մեծ աշխատանք էին տանում նաև Երևանի, Ալեքսանդրապոլի, Կարսի և Սարիղամիշի զինվորական լազարեթներում։

1915—1916 թթ. զինվորական հեղափոխական կազմակերպություն է գործել Ալեքսանդրապոլում, որը կապ է ունեցել երկրի հեղափոխական կենտրոնների՝ Մոսկվայի, Պետրոգրադի, Թիֆլիսի և այլ քաղաքների կազմակերպությունների հետ։ Այս կազմակերպությունը ստացել և զինվորների մեջ է տարածել հակապատերազմական, հակակառավարական բովանդակությամբ թռուցիկներ, կազմակերպել է ստացված կոչերի բազմացման և ինքնուրույն կոչերի հրատարակման գործը, այդ նպատակի համար ձեռք բերելով անհրաժեշտ տպագրական միջոցներ[4]։ 1917 թ. մարտի 3-ին, երբ ցարիզմն արդեն տապալված էր, բայց լուրը դեռ Ալեքսանդրապոլ չէր հասել, կամ եթե հասել էր՝ հավաստի չէր թվում, քննվում էր զինվորական այդ կազմակերպության մի շարք ակտիվ անդամների գործը, որը ժանդարմական և դատական օրգաններին հայտնի էր իբրև «Կովկասյան սակրավոր գումարտակի զինվորների մեջ պրոպագանդայի մասին» անունով գործ։ Երևանի նահանգական ժանդարմական վարչության պետի տեղակալի կազմած հետաքննության հիման վրա, կովկասյան ռազմական օկրուգի Ալեքսանդրապոլի բաժանմունքը լսելով գործը, նշում էր, որ այդ գումարտակի շարքային զինվորներ Վասիլի Մոիսեևը և Վլադիմիր Շապոշնիկովը «1916 թվականի հոկտեմբերին համոզել են նույն գումարտակի կրտսեր ենթասպա Պյոտր Կուլյային և շարքային Պյոտր Կոտովին՝ մասնակցելու ընկերությանը, կամ ինչպես նրանք են արտահայտել «կոմպանիային», որն իր գործունեության նպատակն է համարել ստորին աստիճաններին նախապատրաստել պատերազմի շուտափույթ և բռնի ավարտմանը»[5]։ Պատերազմի, ցարիզմի նկատմամբ վերաբերմունքի հարցերում հիշյալ կազմակերպությունը ունի արմատական հեղափոխական ուղղություն և այդ հարցերում իր տեսակետներով չի տարբերվում բոլշևիկյան ուղղությունից։ Սակայն կազմակերպության գործունեության որոշ փաստեր վկայում են, որ այդ կազմակերպությունը ձախ էսեռական, ինտերնացիոնալիստական, դեմոկրատական կազմակերպություն է եղել։ Հիշյալ հարցերի հետ մեկտեղ նա պաշտպանում էր «զենքը դեն նետելու» էսեռական տեսակետը։ Դատարանի որոշման մեջ նշված էր, որ «Մոիսեևը շարքային Կոտովին ցույց է տվել ձեռագիր թռուցիկ, որը սկսվել է «եղբայրներ, դեն նետենք զենքը» բառերով։ Կազմակերպության անդամները այն կարծիքին են եղել, որ իրենց նպատակին պետք է հասնեն նախապատրաստելով նախ զինվորներին՝ «թռուցիկների տարածման ճանապարհով» և որոնք «պետք է արտատպել Մոսկվայից ստացված թռուցիկներից, ստորին աստիճաններին բաժանելու համար»[6]։

Նկատի ունենալով այդ գործի «արտակարգ բնույթը» ռազմական դատարանը այն քննել է հերթից դուրս։

Այժմ մի քանի խոսք ինտերնացիոնալիստ սոցիալիստ-հեղափոխականների մասին։ Այն հեղափոխական-դեմոկրատական ուղղություն էր, որը կողմնակից էր ցարիզմի տապալմանը և վճռականորեն դատապարտում էր իմպերիալիստական պատերազմը։ Վերջին տարիներին Մոսկվայում լույս տեսած

4 Տե՛ս Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 1229, գ. 4193։

5 Նույն տեղում, թ. 1։

6 Նույն տեղում, թ. 21։

ժողովածուներում բերվում են նաև էսեռական այդ ուղղության հեղափոխական գործունեության վերաբերյալ փաստաթղթեր[7]։

Հասկանալի է, որ բոլոր հարցերում չէ, որ բոլշևիկները պաշտպանում էին ինտերնացիոնալիստ սոցիալիստ-հեղափոխականներին։ Արմատական հակասությունները հեղափոխության, նրա շարժիչ ուժերի, տակտիկայի և այլ հարցերի շուրջն էր։ Տվյալ էտապում, սակայն, գլխավորը ցարիզմի տապալումն ու իմպերիալիստական պատերազմին վերջ տալն էր։ Այստեղից էլ բխում էր համագործակցությունը բոլշևիկների և ինտերնացիոնալիստական այլ ուժերի միջև, մի բան, որը բխում էր Կինտալի ու Ցիմերվալդի ոգուց։ Բոլշևիկները մերժում էին նաև «զենքը դեն նետելու» ձախ էսեռական սկզբունքը։ 1916 թ. Վ. Ի. Լենինը գրում էր. «Հեղափոխական գործողությունների թվում պետք է լինեն ցույցերը և մասսայական գործադուլները, բայց ոչ երբեք զինվորական ծառայությունից հրաժարվելը. ընդհակառակը՝ ոչ թե զենք վերցնելուց հրաժարվելը, այլ միայն զենքը իր բուրժուազիայի դեմ ուղղելը կարող է պատասխանել պրոլետարիատի խնդիրներին ու համապատասխանել ինտերնացիոնալիզմի լավագույն ներկայացուցիչների, օր. Կ. Լիբկնեխտի լոզունգներին»[8]։

Ալեքսանդրապոլում զինվորական մասսաների հեղափոխական պայքարի կազմակերպումը հիմնականում մնում էր բոլշևիկների վրա։ Մինչև փետրվարյան հեղափոխությունը նրանք, թեպետ թվով քիչ ու կազմակերպչորեն էլ թույլ էին, բայց ջանք չէին խնայում բոլշևիզմը մասսաների սեփականությունը դարձնելու համար։ Զինվորական շրջաններում և ընդհանրապես քաղաքի բոլշևիկյան կազմակերպության վերականգնման ու ամրապնդման գործում մեծ է հատկապես Պ. Յա. Արվելաձեի դերը։ 1916 թ. կեսերին նա հարավ-արևմտյան ռազմաճակատից տեղափոխվում է կովկասյան ռազմաճակատի առաջին գիծը, մասնակցում թուրքերի դեմ մղված մարտերին, վիրավորվում և 1916 թ. վերջերին տեղափոխվում Ալեքսանդրապոլ, ուր տեղական բոլշևիկների՝ Բագրատ Ղարիբջանյանի, Արտաշես Վարդանյանի և ուրիշների հետ վերականգնում է տեղական կազմակերպությունը, դառնում նրա առավել աչքի ընկնող ղեկավարներից մեկը ու ծավալում հեղափոխական եռանդուն գործունեություն։

Հեղափոխական ագիտացիայի ազդեցությամբ փետրվարի նախօրյակին Ալեքսանդրապոլի շատ զինվորներ նույնպես համակված էին հեղափոխական-դեմոկրատական տրամադրություններով։

Ցարական դատարանը կովկասյան բանակի առավել վտանգավոր տարրերի թվում հիշատակում է Ալեքսանդրապոլի 223-րդ հետևակային պահեստային գնդի զինվոր Ս. Մ. Գորբուլսկուն, որը մորը հասցեագրած նամակում այն միտքն է արտահայտել, թե «բոլոր արքայական գահերը լցվել են ավազակների բանդայով, հենց իրեն՝ ատամանի (Նիկոլայ 2-րդի —Հ. Մ.) գլխավորությամբ», և որ «բոլոր միապետները անիծյալ բարբարոսներ և ավազակներ են»[9]։ Այդ գործի առթիվ ուշադրավ է Կովկասյան բանակի շտաբին կից ռազմա-դատական բաժնի վարիչի այն հաստատումը, թե նամակում «տեղավորելով այդպիսի հանդուգն արտահայտություններ բոլոր միապետների հասցեին,

---

7 Տե՛ս «Революционное движение в армии и во флоте в годы первой мировой войны, 1914—февраль 1917», № 36, 100 և այլ փաստաթղթերը։

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 176։

9 Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 1229, ց. 1, գ. 2750, թ. 23։

որոնք ընդհանրապես մասնակցում են ներկա պատերազմին, մեղադրյալը անկասկած նրանց թվում նկատի է առել նաև Ռուսաստանը բարեհաջող կառավարող Միապետին»[10]։

Ուշադրության արժանի է այն, որ Գորբուլսկին իմպերիալիստական պակասկած նրանց թվում նկատի է առել նաև Ռուսաստանը բարեհաջող կառավարություններին։

Կովկասյան ռազմա-օկրուգային դատարանը Գորբուլսկուն մեղավոր ճանաչելով «թագավոր կայսրին» հասցրած «հեռակա վիրավորանքի» համար, որով «նպատակ է ունեցել դրդել չհարգելու նրա անձը», որոշում է ուղարկել նրան տաժանակիր աշխատանքի՝ վեց տարի ժամկետով[11]։

Կովկասյան ռազմաճակատում, մասնավորապես Արևմտյան Հայաստանում հեղափոխական շարժումները մեծ մասշտաբներ են ընդունում 1916 թ. գարնան և ամռան ամիսներին։ Առանձնապես աչքի էր ընկնում Խնուս-Էրզրում-Սարի-ղամիշ շրջանը։ Կազանի օկրուգի ռազմական գրաքննիչների ձեռքն էին ընկել ռազմաճակատի հիշյալ հատվածից հասցեագրված մի քանի նամակներ։ 1916 թ. մարտի 25-ին ռազմաճակատից Դավրիլ Ռոմանովի գրած նամակում ասվում էր. «Մեր գործերը նախանձելի չեն ոչ միայն թուրքերի հետ, այլև ընդհանրապես։ Բունտեր են սկսվում... մեր ողջ դիվիզիան ապստամբել է։ Կուբանյան և Դերբենդի գնդերում սպաներին ծեծել են, իսկ մերում դեռևս այդպես չէ։ Բայց գործը հա մոլեգնում է, այնպես, որ դարձյալ գնում է դեպի այն (բունտը —Հ. Մ.)»[12]։

Ռազմական և քաղաքացիական իշխանություններն ամեն կերպ աշխատում էին փակել այն «չարամիտ» լուրերի ճանապարհը, որոնք գալիս էին Էրզրումի շրջանից և ընդհանրապես կովկասյան ռազմաճակատից։ Ոմն, Կոխ, որը Թիֆլիսի գրագիրների շրջանում տարածել էր, թե Էրզրումի կայազորում տեղի են ունեցել մեծ հուզումներ, և որ զինվորները սպանել են բազմաթիվ սպաների, դատական իշխանությունների կողմից 1916 թ. ապրիլի 8-ին խստագույն պատժի է ենթարկվում[13]։

Իշխանությունները, պաշտոնական ու բուրժուական մամուլը ճգնում էին գործն այնպես ներկայացնել, որ կովկասյան ռազմաճակատում ամեն ինչ հանգիստ է, և որ «հարձակվող հերոսական բանակը» իր «փայլուն» նվաճումներով՝ ինքնին մերժում է «խռովարար» շարժման վերաբերյալ այն խոսակցությունները, որոնք հապար ու մի ճանապարհներով թափանցում էին մերձճակատային շրջանները և ողջ երկիրը։ Սակայն, հակառակ այդ ամենի, տեղի էին ունենում մասսայական լուրջ հուզումներ, որոնք ծայր աստիճան անհանգստացնում էին իշխանություններին։

Շարժման մեջ էին ներգրավվում նորանոր զորամասեր, որոնք հրաժարվում էին հարձակման գնալ։ Իրադարձությունները այստեղ են բերում փոխարքա, կովկասյան բանակի հրամանատար Ն. Ն. Ռոմանովին, շտաբի պետ Յուդենիչին և այլ բարձրաստիճան հրամանատարների։ Ապստամբների դեմ են նետվում ռազմաճակատից բերված զորամասեր։ Այդ զորամասերը, որոնց

10 Նույն տեղում, թ. 4։

11 Նույն տեղում։

12 «Царская армия в период мировой войны и февральской революции», Казань, 1932, стр. 91.

13 Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 1082, ց. 5, գ. 757։

լավ ծանոթ էր սովն ու ռազմաճակատային դաժան կյանքը, հրաժարվում են կրակել իրենց ընկերների վրա։ Որպես պատիժ, ապստամբ զորամասերը ուղարկվում են ռազմաճակատի առաջին գիծը։ Այստեղ նրանց դեմ են հանվում ոստիկանական զորամասեր՝ «խաչակիրներ»։ Տեղի է ունենում ապստամբ և պատժիչ ուժերի իսկական ճակատամարտ, որի ժամանակ պատժիչ զորամասը լավ դաս է ստանում։ Կազանի օկրուգի Գրյազնուխա գյուղ հասցեագրված, այդ իրադարձություններին մասնակից, զինվորներից մեկի նամակում գրված է. «Մենք առաջին գծում էինք, պահանջեցին, որ մենք գնանք Սարիզամիշ ճնշելու (ապստամբ զորամասերին). երբ մենք գնում էինք, կարծում էինք, թե գնում ենք հանպստի։ Մարտի 16-ին մեզ քշեցին քաղաք՝ ճնշելու 2 գնդերի՝ կուբանյան և վրացական։ Մեզ շարք կանգնեցրին և հրամայեցին կրակել... Երբ մենք իմացանք, թե ինչու են նրանք գործադուլ արել, ոչ nf ոչ մի փամփուշտ չկրակեց։

Այդ ժամանակ մեզ թողեցին, քշեցին կազակներին. կազակները նույնպես հրաժարվեցին և այդ ժամանակ երկու գնդերն էլ առաջին գիծ ուղարկեցին...

Երբ Նիկոլայ Նիկոլաևիչը լսեց, մարտի 23-ին գնաց հաշվեհարդար տեսնելու»[14]։

Խնուս-Էրզրում-Սարիզամիշ շրջանում բաղմահազար զինվորների այդ հուզումների մեջ աչքի էին ընկնում բանակի հեղափոխականացման բուռն պրոցեսի մի շարք բնորոշ երևույթներ։ Դրանցից մեկն այն էր, որ ոչ թե առանձին զինվորներ, այլ ամբողջ զորամասեր հրաժարվում էին կատարել հրամանը, մերժում էին ռազմաճակատի առաջին գիծը մեկնելու պահանջը։ Զինվորների համբերության բաժակը լցվել էր։ Նրանք դրությունից դուրս գալու այլ ելք չէին տեսնում։ Այդպիսի մասսայական հեղափոխական տրամադրությունների և զինվորական իշխանությունների դեմ վճռական գործողությունների հաջորդ քայլը, նրանց տրամաբանական զարգացումը հանգեցնում էր նրան, որ զինվորները իրենց զենքը պետք է դարձնեին հրամանատարության դեմ։ Բոլշևիկների, հեղափոխական-դեմոկրատական ուժերի ագիտացիայի ազդեցությամբ և կյանքի ուղղակի թելադրանքով զինվորները պատրաստ էին գնալու և գնում էին դեպի արմատական հեղափոխական միջոցառումների իրագործումը։

Պակաս կարևոր չէր նաև երկրորդ երևույթը, որը բխում էր առաջինից և լրացնում նրան։ Այդ այն էր, որ ոստիկանական նկատառումներով ընտրված «վստահելի» զորամասերը, անգամ կազակային զորամասերը, բացահայտորեն հրաժարվում էին կատարել բարձր հրամանատարության հրամանը և «ոչ մի փամփուշտ չէին արձակում» նույն դրության մեջ գտնվող, նույն խոհերով ապրող, ավելի համարձակ ու ավելի նախաձեռնող իրենց ապստամբ ընկերների վրա։

Տեղի էր ունենում հեղափոխական գնդերի ձևավորում. կոփվում էր հեղափոխության քաղաքական բանակը։

Էրզրումի շրջանի իրադարձությունների համար վերին աստիճանի ուշագրավ երևույթ էր նաև այն, որ գիտակից զինվորները արտահայտելով զինվորական մասսաների խոհերն ու մտորումներն իմպերիալիստական պատերազմի և նրանով շահագրգռված ուժերի նկատմամբ, 1916 թ. կեսերին բազմաթիվ անստորագիր նամակներ էին ուղարկում արդյունաբերական կենտրոն-

---

[14] «Царская армия...», стр. 91.

ների բանվորներին, կոչ անելով նրանց՝ բարձրացնելու պրոլետարական բողոքի ձայնը ընդդեմ պատերազմի, ցարիզմի ու բուրժուազիայի։ 1916 թ. մայիսի 5-ին այդպիսի մի նամակ ստացվեց Դոնբասի Դոլժանսկի ածխահանքի գրասենյակում։ Նամակում հայտնվում էր, որ սովն ու մահացությունները ճակատային կյանքի տիրապետող երևույթներն են դարձել, որ տեղի են ունեցել բազմաթիվ զորամասերի ապստամբություններ։ Նամակի հեղինակները խընդրում էին այն կարդալ բանվորներին, որպեսզի նրանք այդ ամենը իմանան։ Միևնույն ժամանակ նշվում էր, որ Էրզրումում գրվել և տարբեր վայրեր են ուղարկվել հարյուրից ավելի այդպիսի նամակներ։ Պարզ է, որ այդ նամակների հեղինակները Ռուսաստանի տարբեր արդյունաբերական կենտրոններից զորակոչված և կովկասյան ռազմաճակատ բերված բանվորներ էին, որոնց ծանոթ էր բոլշևիզմը, նրա նպատակներն ու պայքարի մեթոդները։

1915—1916 թթ. ռազմաճակատի Տրապիզոն-Էրզրում-Սարիղամիշ-Կարս շրջանում ակտիվորեն գործում էին բոլշևիկները։ Կովկասյան ռազմաճակատի Տրապիզոնի շրջանում 1916 թ. հեղափոխական աշխատանք էր տանում բոլշևիկյան կուսակցության ականավոր գործիչ Պ. Ա. Ջափարիձեն։ 1914 թ. վերադառնալով Վոլոգդայի աքսորից, Ջափարիձեն կանգնում է Թիֆլիսի բոլշևիկյան կազմակերպության գլուխ, վերականգնում և ամրապնդում է այն։ 1915 թ. մայիսին նա նորից ձերբակալվում և աքսորվում է Ենիսեյի նահանգի Կամենկա գյուղը, որտեղից շուտով փախչում է և վերադառնալով Թիֆլիս, կուսակցության հանձնարարությամբ, Բարաթով ազգանվամբ ընդհատակյա աշխատանքի է անցնում Տրապիզոնի Կարմիր խաչի կազմակերպությունում։

Փետրվարյան հեղափոխությունից առաջ Տրապիզոնի շրջանում էին գործում նաև Հ. Հովսեփյանը, Ե. Էշբայը, Վ. Կվիրկելիան, Ա. Վարդապետյանը և ուրիշներ։ Ե. Էշբայը հիշում է, որ ինքը Հ. Հովսեփյանի, Բաբաշիմսկու և այլոց հետ աշխատանք էր տանում Տրապիզոնի շրջանի զինվորների մեջ[15]։

Թուրքական ռազմաճակատում, մինչև փետրվարյան հեղափոխությունը, պրոպագանդիստական-կազմակերպչական մեծ աշխատանք էր տանում Գ. Ն. Կորգանովը՝ կովկասյան բանակում բոլշևիկյան աշխատանքի կազմակերպման նշանավոր դեմքերից մեկը։

1914—1917 թթ. կովկասյան ռազմաճակատում էր նաև հետագայում Բաքվի 26 կոմիսարներից մեկը՝ Ս. Գ. Հովսեփյանը։ Պատերազմի առաջին օրը նա զորակոչվում է, նախ ուղարկվում Իրան, ծառայում ռուսական էքսպեդիցիոն կորպուսում, իսկ հետո՝ 1915 թ. տեղափոխվում թուրքական ռազմաճակատ՝ Էրզրումի շրջանը, ուր ստեղծում է բոլշևիկյան կազմակերպություն։ Կիրթ, կենսուրախ, ջերմ սպան զինվորների սիրելին էր։ Նրա համոզիչ բոլշևիկյան ագիտացիան բախտորոշ նշանակություն ունեցավ շատ զինվորների կյանքում։

Սարիղամիշ-Էրզրում շրջանում եռանդուն աշխատանք էր տանում Ս. Կ. Ալավերդյանը։ Ավարտելով Մոսկվայի առևտրական ինստիտուտը, Ալավերդյանը 1915 թ. վերջերին շտապում է Անդրկովկաս և ողջ էությամբ մտնում հեղափոխական պայքարի հորձանուտը։ ՌՍԴԲԿ (բ) կովկասյան բյուրոյի հանձնարարականով նա աշխատանքի է անցնում Սարիղամիշում, կանգնում հեղափոխական շարժման գլուխ և մինչև 1918 թ. սկիզբը գլխավորում բոլշևիկ-

15 Տե՛ս Ս. Ս. Նալբանդյան, Հերոսական ուղիով, Երևան, 1966, էջ 90—91։

ների ու հեղափոխական մասսաների պայքարը։ Սարիղամիշ-Կարս-Էրզրում շրջանում ակտիվ բոլշևիկյան աշխատանք էին տանում նաև աչքի ընկնող բոլշևիկներ Ի. Կիասովը (Կիասաշվիլի), Ֆ. Սոլնցևը, Լ. Քարթվելիշվիլին (Լավրենտև), Տ. Մուսիևը, Հ. Սարուխանյանը, Ս. Դ. Թավդիշվիլին, Ն. Լեժավան, Գ. Հայկունին և ուրիշներ։ Գ. Հայկունին գրում է. «Թիֆլիսում ես ընդունվեցի քաղաքների միությունն և նշանակում ստացա՝ աշխատելու Սարիղամիշ-Էրզրում շրջանի գլխավոր գրասենյակում։ Ամբողջ 1916 թվականը և 1917 թ. առաջին եռամսյակը բնակվեցի և աշխատեցի Սարիղամիշում։ Այստեղ ևս ես չկտրվեցի կուսակցական աշխատանքից։ Ստյոպա Ալավերդյանի հետ ես ապրում էի միևնույն սենյակում»[16]։

Թուրքեստանյան 2-րդ կորպուսում, Էրզրում-Բայբուրթ-Մամախաթուն շրջանում էր գործում ականավոր բոլշևիկ Հովսեփ Պողոսյանը, որի հեղափոխական գործունեությունը սկսվել էր դեռ ռուսական առաջին հեղափոխությունից էլ առաջ։ Պատերազմի սկզբում զորակոչվելով բանակ, նա ծառայում է Ելիզավետպոլում, որտեղ, ինչպես ինքն է վկայում, 18-րդ վաշտում ստեղծում է 6 հոգուց բաղկացած բոլշևիկյան բջիջ։ Ինքնակենսագրության մեջ, մինչև փետրվարյան հեղափոխությունը ռազմաճակատում ծավալած իր գործունեության մասին նա գրում է. «1916 թ. ես արդեն թուրքական ռազմաճակատում էի, Կալկիտ քաղաքում[17], որտեղ ինձ նշանակեցին 2-րդ թուրքեստանյան կորպուսի կորպուսային ինտենդանտությունում, որպես կորպուսի մատակարարման բաժնի աշխատող։ Այդտեղ ես արագ գործի անցա և մի ամիս հետո կազմակերպվեց փոքրիկ բջիջ ինտենդանտության զինվորներից ու գրագիրներից, որոնց հետ ես տանում էի ընդհատակյա աշխատանք»[18]։

Ամենուրեք բոլշևիկները բացահայտում էին պատերազմի իմպերիալիստական բնույթը, զինվորական մասսաներին գաղափարապես ու կազմակերպչորեն նախապատրաստում տապալելու ցարիզմը։

Փետրվարյան հեղափոխությանը նախորդող ժամանակաշրջանում, երկրում աճող քաղաքական ճգնաժամի պայմաններում, տեղի էր ունենում ցարական հին բանակի անցումը հեղափոխության կողմը։ Այդ հատկապես իր վառ դրսևորումն էր գտնում մեծագույն նշանակություն ունեցող այն փաստի մեջ, որ ոստիկանական ծառայությունների համար մոբիլիզացված զորամասերը հրաժարվում էին «խաղաղացնել», ճնշել պատերազմից ու ծանր կյանքից դառնացած ապստամբ ժողովրդին։ Նրանք ներքին համակրանքով էին վերաբերվում ժողովրդական հուզումներին, հաճախ հենց իրենք էին միանում դրանց։

Կովկասյան բանակի ազգային զորամասերում հեղափոխական շարժումը համեմատաբար լայն մասշտաբներ է ընդունում 1917 թ. երկրորդ կեսին։ Ցարական բանակում տիրապետող դժգոհության՝ անբավականության մթնոլորտը «վարակում է» անգամ կամավորներին, որոնց նպատակն էր Արևմտյան Հայաստանը ազատագրել թուրքական լծից։ Շուտով հայ զինվորներից շատերին պարզ դարձավ, որ ցարիզմը հայ ժողովրդի նվիրական իղձերը չարաշահում է սոսկ իր իմպերիալիստական նպատակներին հասնելու համար, ձգտում է Հայաստանը «մաքրել» հայերից, այն դարձնել կայսրության սովորական

16 Տե՛ս Գ. Հայկունու անձնական գործը ՄԼԻ-ի հայկական ֆիլիալում։

17 Բայբուրթից արևմուտք։

18 Տե՛ս Ա. Հ. Պողոսյանի անձնական գործը ՄԼԻ-ի հայկական ֆիլիալում։

մարզերից մեկը։ Այս և ազգային բնույթի այլ հակասությունները չէին կարող հլու հնազանդ պահել հայ զինվորներին։ Այդ բոլորի վրա բարդվում էին նաև սոցիալ-քաղաքական բնույթի մեծ հակասությունները, որոնք կային մի կողմից ցարիզմի, շահագործող դասակարգերի և մյուս կողմից աշխատանքի մարդկանց միջև։

Եվ ահա, 1916 թ. մայիսի 26-ին Կովկասյան առաջին բանակային կորպուսի ռազմական դատարանը հայկական 6-րդ վաշտի մի զորաջոկատի հրամանատար Հ. Տեր-Գրիգորյանցին և նրա դրուժինայի 25 զինվորի (ԱՄՆ-ից եկած կամավորներ) ներկայացնում է «ապստամբությանը բացահայտորեն մասնակցելու» մեղադրանք և մահապատժի դատապարտում հրամանատարին, իսկ զինվորներին պատժում 6—2 տարվա ազատազրկման[19]։

Հայկական «Տարոնի ջոկատի» հրամանատար Իշխանի 1915 թ. կեսերի մի շարք հրամաններից բացահայտվում են ջոկատում տիրող հեղափոխական-դեմոկրատական տրամադրությունները։ Նա դիմում էր զինվորներին, ասելով. «Մի խառնվեք փողոցային հավաքներին», «հիշեցեք, որ ռուսական բանակի յուրաքանչյուր սպա հանդիսանում է պետ և դուք պարտավոր եք կատարելու նրա հրամանը»[20]։ Նա խորհուրդ էր տալիս, որ հարազատներին հղած նամակներում պետք չէ գրել «դրուժինաների դրության մասին»։

Հեղափոխական ագիտացիայի առաջն առնելու նպատակով, նա հրամայում է. «Հետևել, որպեսզի կողմնակի անձինք լինավ մուտք չունենան բանակ»[21], որ «սուր հանել միայն թշնամու դեմ կռվելիս», որ «պետք է դիսցիպլինա ունենալ, ահա մեր հավատո հանգանակը»[22]։

Կամավոր զինվորների հոգում հասունացող երկվությունը ակնհայտ է։ Ցարիզմի հետ ընդդեմ դարավոր թշնամու՝ թուրքերի։ Ցարիզմի, շահագործող դասակարգերի դեմ՝ հանուն ժողովրդի նկատմամբ նրա կիրառած սոցիալական ու ազգային բռնությունների լիկվիդացման։ Խորացող հակասությունների, հասունացող պայքարի բովում առնականանում էր նաև հայ զինվորների հակացարական, ազատագրական ոգին։ Այդ պայքարից ծնվեցին, պրոլետարիատի բարձրացող շարժմանը որդեգրվեցին շատ հայ զինվորներ։

Բանակի արագ հեղափոխականացման պրոցեսը տեսնում էին նաև ծայրահեղ աջ ուժերը։ 1915 թ. օգոստոսին Ռուսաստանի մինիստրների խորհրդում ունեցած իր ելույթում կոմս Իգնատևը շատ դիպուկ նկատում էր, որ «բանակը դադարել է բանակ լինելուց և վեր է ածվել զինված ժողովրդի»[23]։

Ամենուրեք զգացվում էր մոտալուտ ահեղ փոթորիկը։ Ինչպես նշված է ռազմական դատարանի № 1 որոշման մեջ, 1917 թ. փետրվարի 22-ին, Սարիղամիշից հարավ գտնվող Կարակուրտ բնակավայրում, 7-րդ դիվիզիայի 27-րդ հրաձգային գնդում, զինվորները բաժանեցին հրացաններն ու պատրոնները, հեռացրին սպաներին և բացելով անկանոն կրակ, նախապատրաստվեցին Կարակուրտից գնալ և միանալ Սարիղամիշի շրջանում գտնվող 28-րդ գնդին[24]։ Այդ նույն շրջանում 28-րդ գունդը նույնպես ապրում էր հեղափոխական բուռն

---

19 Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 1082, ց. 5, գ. 762։
20 Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 120, գ. 11, թ. 1։
21 Նույն տեղում։
22 Նույն տեղում, գ. 14, թ. 1։
23 Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 1229, գ. 4384։
24 Տե՛ս նույն տեղում, ֆ. 1682, ց. 5, գ. 1064, թ. 11։

պրոցես, պատրաստվում ակտիվ պաշտպանության, հաստատելով հեղափոխական կարգուկանոն։ Ականատեսներից մեկը այսպես է նկարագրում իրադարձությունների զարգացումը դնդում. «Երբ կապիտաններից մեկը առանց մտածելու ապստամբներին սպառնաց կազակներով ու այլ զորամասերի դրոդացիրներով, այդ ժամանակ դնդի զինվորները պատրաստվեցին ակտիվ պաշտպանության։ Ձերբակալեցին սպաներին, պահեստից վերցրին և յուրաքանչյուրին բաժանեցին 240 փամփուշտ, զինեցին բոլոր անգեններին, լեռնեռում հրանոթներ դրեցին և գրավեցին պաշտպանության համար հարմար դիրքեր. պահպանվում էր խստագույն կարգ»[25]։

Փետրվարի 23-ին 28-րդ դնդի զինվորները «աղաղակներով ու անկանոն կրակոցներով»[26] դնդի բնակատեղին հանդիսացող Պրոմեժուտոչնայա կայարանում կանգնեցրին այն ավտոմեքենան, որով ուղևորվում էին դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Ամասիյսկին և մի խումբ սպաներ։ Զինվորներից մեկը դիմելով գեներալին, ասում է. «Գնդում սնունդը վատ է, շիլան ուտել հնարավոր չէ, հացը տալիս են խմոր վիճակում, սպիտակեղենը չի բավականացնում, կոշիկ չկա, բուժկայանում հիվանդներին օգնություն ցույց չեն տալիս, սպաները շատ վատ են վարվում ստորին աստիճանների հետ»[27]։ Նույն այդ ժամանակ, երբ զինվորների ներկայացուցիչը բացատրում էր ապստամբության շարժառիթները, նրա թիկունքում կտնվող զինվորական հսկայական բազմության միջից լսվում են «կորչի պատերազմը», «Ռուսաստանը ծախել են», «բոլոր դրանք Սուխոմլինովից լավը չեն» և այլ բացականչություններ։

Գնալով դեպքերը ավելի բուռն բնույթ են ստանում։ Երբ մի քանի սպաներ, տեսնելով գեներալի ծանր վիճակը, փորձում են ճեղքել զինվորների շրջափակումը և նրան օգնության հասնել, զինվորները փակում են նրանց ճանապարհը, սպառնում են սպաներին, ծեծում ոմանց և դրանից հետո գեներալին և ավտոմեքենայում գտնված սպաներին «ստիպում են... ոտքով գնալ գետնափոր տնակը՝ գնդի տնօրինության տակ»[28], այլ կերպ ասած զինվորները ձերբակալում են դիվիզիայի հրամանատարին և սպաներին։ Այդ ավելի որոշակի է երևում դատարանի որոշման այն մասից, ուր ասված է, որ «երբ բոլորը մտան գետնափոր տնակը, վերջինս շրջապատվեց պահակներով»[29]։

Ձերբակալելով դիվիզիայի հրամանատարին, զինվորները ստեղծում են հեղափոխական զինվորական կոմիտե, որին և հանձնարարվում է հազարավոր զինվորների անունից բանակցել գեներալի հետ։

«Հույժ շտապ» գաղտնի հեռագրերը անմիջապես տեղեկացրին կովկասյան ռազմաճակատի կարևորագույն հանգույցում տիրող այդ ապստամբական դրության մասին։ Ամսի 25-ին իրադարձությունների ընթացքի մասին Յուդենիչին զեկուցեց Ամասիյսկին, որին զինվորները ազատ էին արձակել ստանալով նրանից իրենց որոշ պահանջների բավարարման խոստում։

Հեռագիր զեկուցագրում ասվում էր. «Զեկուցում եմ. փետրվարի 22-ին, 27-րդ հրաձգային գնդում, ժամը մոտավորապես երեկոյան 5-ին, սկսվեցին

---

25 «Известия Советов рабочих и военных депутатов Бакинского района», № 35, от 16 мая 1917 г. (ընդգծումն իմն է—Հ. Մ.)։

26 Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 1082, ց. 5, գ. 1064, թ. 11։

27 Նույն տեղում։

28 Նույն տեղում։ Ընդգծումն իմն է — Հ. Մ.։

29 Նույն տեղում։ Ընդգծումն իմն է — Հ. Մ.։

հուզումներ. ամբողջ գունդը ազդանշանով շարք կանգնեց, իրեն շրջապատեց պահակակետերով, շթույլատրելով սպաներին, ջարդեց փամփուշտների արկղները, բաժանեց դրանք և նախապատրաստվեց ելույթի Կարակուրտ–Սարիղամիշ ուղղությամբ...

Փետրվարի 23-ին ես դուրս եկա (Սարիղամիշից — Հ. Մ.), որպեսզի համհարզի հետ միասին ուղևորվեմ 27-րդ գունդ. 27-րդ գնդում հանգիստ էր. ետ վերադարձա ժամը 18-ին. անցնելով Պրոմեժուտոչնայայի մոտից, որտեղ կանգնած էր 28-րդ գունդը, ես լսեցի մասնակի կրակոցներ և բղավոցներ։ Կրակում էին օդի մեջ. կանգնեցի... շրջապատվեցի ստորին աստիճաններով... Անբավականություն էին արտահայտում վատ սննդից, այն բանից, որ քիչ շաքար են ստանում, որ նամակները ստուգվում են վաշտի հրամանատարների կողմից. դժգոհում էին սպաներից. լսվում էին բղավոցներ. «կորչի պատերազմը» 28-րդ գնդում ավերվել է ցեյխաուզը (զինապահեստը — Հ. Մ.), բաժանվել են փամփուշտները, ջարդվել է դրամարկղը և տարվել մոտ 240.000 ռուբլի. գնդացիրներ։ Ապստամբների կողմից գնդի բնակության շրջանի բոլոր կողմերում ժամապահներ են կանգնեցվել։ ...Կապիտան Լուկաշևսկու վրա կրակել են։ Ներկայումս 26-րդ գունդը հանգիստ է, 27-ը լիովին հանգիստ է, 28-րդ գնդում հնարավոր են հուզումներ։ Մարդիկ հրաժարվել են հանձնել փամփուշտները. բացառությամբ մի քանի դասակների»[30]։

Իրադարձությունների մասին ամսի 26-ին փոխարքային է զեկուցում Յուդենիչը[31]։ Մյուս զեկուցագրերից ուշագրավ է 27-րդ գնդի շտաբի պետ Կարաուլովի զեկուցման այն մասը, ուր նշվում էր, որ «Սարիղամիշում գտնվում է կազակների բրիգադը, հրետանին, 26-րդ գնդի գնդացրային և ուսումնական զորաջոկատները»[32], որոնք հրամանատարության կողմից ընտրվել էին ապստամբների սպասվող նոր հուզումները ճնշելու համար։

Եթե հանրագումարի բերենք հրաձգային 7-րդ դիվիզիայի ապստամբության պատճառների, արդյունքների ու ավարտի հանգամանքների փաստերը, ապա կարելի է հանգել ներքոհիշյալ հետևություններին.

1. Ցարական բանակի մասը կազմող 7-րդ հրաձգային դիվիզիան իր դրությամբ ու պահանջներով արտացոլում էր այդ բանակի ընդհանուր պատկերը։ Նրանում, ինչպես ողջ բանակում և երկրում հասունացել էր այն գիտակցությունը, որ իմպերիալիստական պատերազմից կարելի էր դուրս գալ միայն այդ պատերազմը սանձազերծած ուժերի և ամենից առաջ ցարիզմի տապալմամբ։

2. Կովկասյան բանակի զինվորները հեղափոխական ուժերի ուղղակի ներգործությամբ, և կյանքից ստացած սեփական դասերով, 1917 թ. փետրվարին արդեն համոզվել էին, որ անհատական, մասնակի ելույթները չեն լուծի իրենց հետաքրքրող արմատական հարցերը, որ դրա համար անհրաժեշտ է զինվորների և տարբեր զորամասերի միավորում։

3. Շարժման ընույթից և ընթացքից երևում էր, որ ապստամբությունը ուներ հեղափոխական դեմոկրատիային ներկայացնող միասնական ղեկավարություն։

---

30 Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 1082, ց. 5, գ. 1064, թ. 3—5։ Ընդգծումներն իմն են — Հ. Մ.։

31 Նույն տեղում, թ. 6։

32 Նույն տեղում, թ. 7։

4. Ապստամբների վճռականությունը շարժման սկզբում հանգեցրեց արմատական լուրջ միջոցառումների կիրառման. դրանք էին՝

ա) 27-րդ և 28-րդ գնդում հաստատվեց հեղափոխական դիսցիպլինա։

բ) Գրավվեցին զենքի պահեստները և անհրաժեշտ զինամթերքով ապահովվեցին զինվորները։

գ) Հեղափոխական հսկողություն սահմանվեց զորամասերի բնակատեղի նկատմամբ։

դ) Հակահեղափոխության հնարավոր հարձակման դեմ ձեռնարկվեց ակտիվ պաշտպանական միջոցառումներ. տեղադրվեցին թնդանոթները, գնդացիրները, դասավորվեցին զորամասերը։

ե) Աղատ արձակվեցին մինչև ապստամբությունը քաղաքական գործերով ձերբակալված զինվորները։

5. Առավել վճռականորեն հանդես եկավ 28-րդ գունդը, որտեղ վերոհիշյալ միջոցառումներից բացի զինվորները ձերբակալեցին դիվիզիայի և գնդի բարձրաստիճան հրամանատարներին, հեղափոխական օրգանների հսկողության տակ առնվեց գնդի դրամական միջոցները՝ մոտ 240.000 ռուբլի գումարով, ինչպես նաև սպայական ժողովի ունեցվածքը։ Գունդը միահամուռ պատրաստակամություն դրսևորեց միավորվելու 27-րդ գնդի հետ, որն իրագործելու նպատակով էլ ուղարկվեց պատվիրակություն։

6. Շարժումը ուներ մինչիետրվարյան հեղափոխական պայքարի բոլոր հիմնական թերությունները, որոնք բխում էին մասսաների դեռևս ոչ բավարար քաղաքական, դասակարգային հասունությունից։ Ապստամբության ժամանակ դիվիզիայի տարբեր գնդերի միավորումը փաստորեն չիրագործվեց և զորամասերը հանդես եկան իրարից անջատ-անջատ։ Կարճ ժամանակով ձերբակալելով դիվիզիայի բարձր հրամանատարներին և սպաների զգալի մասին, զինվորները անփորձության, պակաս վճռականության պատճառով շատ շուտով արձակեցին նրանց։ Ապստամբության շրջանում ստեղծվեց ղեկավար օրգան՝ հեղափոխական կոմիտե, որը, սակայն, ընդունակ չգտնվեց հետևողականորեն շարունակելու և զարգացնելու սկսված ապստամբությունը։ Նրանք սահմանափակվեցին «ակտիվ պաշտպանությամբ»։

7. Շարժման ուժի վկայությունն էր այն, որ կովկասյան բանակի հրամանատարությունը չհամարձակվեց ռազմական ուժ գործադրել ապստամբների նկատմամբ։ Հասունացող հեղափոխական սիտուացիայի պայմաններում, երբ ընդամենը մի քանի օր հետո կործանվելու էր ցարիզմը, հրամանատարությունը չէր վստահում ողջ բանակին։ Նա «չարացած լռությամբ» անցավ ապստամբության կողքից։

Սխալ է որոշ ուսումնասիրողների այն կարծիքը, թե դիվիզիայում հուզումները դադարեցին միայն այն ժամանակ, երբ ստացվեցին ցարիզմի տապալման վերաբերյալ լուրերը[33]։

Հեղափոխական շարժման վերելքի պայմաններում կովկասյան բանակի մյուս զորամասերում ևս հասունանում ու խորանում էր պայքարը։

---

33 Տե՛ս «Труды Тбилисского гос. пед. института им. Пушкина», т. 8. 1950, стр. 261.

СОЛДАТСКИЕ РЕВОЛЮЦИОННО-ДЕМОКРАТИЧЕСКИЕ ДВИЖЕНИЯ В АРМЕНИИ

(1916—март 1917 г.)

Г. С. МЕЛИКЯН

Резюме

В статье исследуется революционное движение солдат Кавказской армии в годы первой мировой войны.

Рассматриваемый вопрос до последнего времени частично затрагивался в работах некоторых закавказских историков, в частности, в трудах А. П. Стеклова, М. В. Арзуманяна, М. В. Церцвадзе и других.

Ссылаясь на исторические факты, автор пытается с новых позиций рассмотреть революционно-демократическое движение солдатских масс на территории Армении. В работе показана деятельность большевистских организаций края в армии, а также видных большевиков: Г. Н. Корганова, П. А. Джапаридзе, С. К. Алавердяна, П. Я. Арвеладзе, С. Г. Осепяна, О. А. Погосяна, Ф. Ф. Солнцева, Г. А. Овсепяна, И. Киасова и многих других.

Имея в виду то, что солдатские революционные движения происходили в эпоху буржуазно-демократической революции, в работе уделено должное внимание деятельности других интернационалистических демократических организаций. Совместные действия всех демократических сил против царизма полностью совпали с линией Циммервальдской конференции, с ленинской установкой движущих сил революции.